

Տարեկան գին 8 ՄԷԸ:
Չափազանց 40 ՄԷԸ:
Վեցամսեայ 4 ՄԷԸ:
Չափազանց 5 ՄԷԸ:
Եւրոպայի թերթի գին 60 փրկ:
Վեցամսեայ տեղը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կրկնայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 20 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 28 յուլիս.
Հաւանական է որ ազգային ժողովոյ
պարագային օգոստոս 6ին պիտի ըլլայ:
Վիճարանութիւնը վաղը պիտի սկսի, և
աւարտելէն ետեւ ժողովը պիտի բաժնուի:

Պէրլին 29 յուլիս.
Գաւառական թղթակցութիւն լրա-
դիրը կըսէ թէ կրնայ յաւանդուիլ որ դեր-
մանական նաւախառնիկն Սպանիոյ հիւ-
սիսային ծովերէն երբեք չպիտի Սպանիոյ
գործերուն յաջող դարձուածք մը տայ:

Լոնտրա 29 յուլիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ Պ Պոլը
Գերմանիոյ նկատմամբ եղած հարցման
մը պատասխանելով, Սպանիոյ գաւառաց
անդադանց կէտերն ու ստացուածքը
պաշտօնական համար անդգիական նա-
ւախառնիկ մը զրկելու խնդիրը ժողովին
որոշմանը ներկայացուց:

Վիեննա 30 յուլիս.
Աւսթրիոյ Օթման պաշտօնային բաժա-
նարդաց ընդհանուր ժողովն այսօր գու-
մարեցաւ Պ Շէրի նախագահութեամբ:
Բաժնարդը ներքէն 2127 ձայն կը ներկայա-
ցնէին: Վարչական խորհրդին տեղե-
կարդին եզրակացութիւնն Օթմանեան
խոյսերական պաշտօնային հետ միացում
կառավարիկը: Այս առաջարկութիւնը մի-
տային ընդունուեցաւ: Միայն մէկ բա-
ժանորդ մը, Պ Վորովց, յայտարարեց Պ.
Հիլլի առաջարկէն հինգի տեղ 10 անգա-
մէ բաղկացեալ մասնաժողով մը սահմա-
նել: Նախագահն այս առաջարկութիւնը
նկատողութեան տանուլ խոստացաւ:

Փարիզ 29 յուլիս.
Գաղղիոյ Պանթան շրջանի իր առ-
նելեաց տարեկան զլխավորին 50 մի-
լիոն ֆրանք պահանջներու առաջարկու-
թիւնը, զոր Պ Վոլովցի ըրած էր, և
ազգային ժողովն ալ ընդունած: Պան-
թան նոր հիմանց վրայ կառավարութեան
հետ բանակցելու արտադրութիւնն ունի:
Ժողովին մէջ ներքին գործոց նախա-
րար Պ Շապո-Լապլատը ազգային ժող-
ովը լուծման առաջարկութեան զէմ մա-
քառեցաւ: Կը յայտարարէ որ սահմանադրա-
կան օրինաց վրայ վիճարանութիւնը պա-
րագային կ'ենտեղի կուենայ:

Ժողովը 332 ի դէմ 375 բողոքով մեր-
ժեց Պ Վոլովցի առաջարկութիւնն որ
ազգային ժողովը լուծման կը վերադարձնէ:
Պ Քիլլի յայտարարեց իր օրինակ ազ-
գային ժողովին մէջ:

Լոնտրա 30 յուլիս.
Անգղիոյ Պանթան իր զեղքը հարիւ-
րին 3 ի հանեց:

Ամեն տեղ աշխատութեանց դադա-
րումները վերջացան:

Պրիւսիա 30 յուլիս.
Քաղաքին մէջ գոռմարում գետնա-
նաժողովն ապարդիւն եղած կը նկատ-
ուի զիւրանազաններէն:

Պրիւսիա 30 յուլիս.
Գերմանիոյ կայսրն յաւանդեալ աշ-

նան Հոռով պիտի երթայ ի փոխադարձ
այցելութիւն իտալիոյ թագաւորին:

Մարտի 30 յուլիս.
Տեղեւոյ հանրապետական լրագիրը
Գաղղիոյ համարութիւն կըցուցնեն՝ քա-
նի որ Բարլոսեանը իրենց սպանութիւն-
ներով ամենուն ատելի կըլլան:

Փարիզ 31 յուլիս.
Պաշտօնական ծանուցում մը ցաւ կը
յայտնէ Փարիզի արքեպիսկոպոսին հըրա-
տարական կոնգրակին վրայ, և կը փա-
փաքի որ լրագրաց մէջ յիշեալ կոնգրա-
կին վրայ բացուած վիճարանութիւնները
գաղղիին:

Կըսուի թէ ընդհանուր դրամադու-
թեան տարարան Որիւկից սեղանաւոր
ներուն կենսագրութիւնը պիտի հրատա-
րակէ Քիլլի օրէն:

Պրիւսիա 31 յուլիս.
Կը հաւատեն թէ Լեւոպական աշ-
րութիւնը Սպանիոյ ծովերէն հանելու
համար համաձայնեւ են միմեանց հետ:

Պրիւսիա 31 յուլիս.
Ռուսիոյ կայսր ինքնապէս նամակին
հակառակ՝ Սպանիոյ Կրանի նախագա-
հը յայտնէ իր փոխանորդ զրկել Պը-
րիւսիայի գետնապաշտօնային:

Լոնտրա 31 յուլիս.

Պանթ.	Բոնա.	44
Բոնա.	4863	—
»	4869	53 7/8
»	4874	62
»	4872	71
Անգլ.	Բոնա.	92 4/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կըսուի թէ իսկանները Բարձր-
Հատան Ֆէհմի Էֆէնդիին նորէն Շէյխ
Իւլ իւլլաթ անուանեալ վրայ մեծա-
պէս գահ ըլլալով շարժակալութեան
ուղերէն մը կ'առարարեն առ Վեհ-
Սուլթանն:

Եգիպտական լրագիրները կը ծա-
նուցանեն թէ Եգիպտոսի խալիֆին
անդրանիկ արդի և ժառանգ թէվ-
ֆիդ փաշային արու զուակ մը ծնեւ
և անունն Ապրաօ փաշա դրուեւր է:

Լէվիթ Թոյմը լրագիրը, որ վը-
ռամ. խալիֆ Շէրիֆ փաշային հասա-
րակային և առանձնական կենաց վը-
րայ անհաճոյ կամ օրն ու հրատարա-
կութիւններ ըրած ըլլալուն պատճա-
ռաւ երկամեայ դադարման պա-
տիժ ստացած էր, նոյն խալիֆ Շէրիֆ
փաշային բարեխօսութեամբ ներում
գտնելով այսօր վերադարձն հրատա-
րել սկսաւ:

Այս շարժում Ամերիկայէն երկու
շողենաւ եկան նոր տեսակ հրացան-
ներով ի, որք կայսերական զօրաց
պիտի բաժնուին:

Արքունի նաւարանին մէջ կաղմ-
եալ յատուկ յանձնաժողով մ'Ալի-
զիէն շողենաւներուն մէջ դրուեալ:

Լաժ նաւապետները քննելով մէկ
քանին ճանրեց, որովհետեւ ոմանք
նաւապետութեան հարկ եղած ծա-
նօթութիւններէն զուրկ էին:

Ծովային գործոց նախարարու-
թիւնը Բրէնսէս վորոնցօֆ անուն
Ռուսական շողենաւ մը դնելէ քան,
Ալիէյ անուն իտալական նաւաճիգ
շողենաւ մ'ալ դնեց, և Աւստրիական
Լոյտի ընկերութեան Մարիա Թէրէ-
զա շողենաւը գնելու համար ալ բա-
նակցութեան մէջ է:

Այս երեք շողենաւներն ալ Ա-
լիէ ընկերութեան գործածութեանը
սահմանուած են:

Գամառիսի և Միրիոյ Յոյն ժո-
ղովուրդն Անտիօքայ պատրիարքին
դէմ ոտք ինկելով, բաղմունքամբ
պատրիարքարանը կոխելէ և բա-
զում նախատանք հրոժարականը
պահանջելէ ետեւ, ընդքայ հանրա-
գիր մը գրած են առ Բ. Դուռն և
պատրիարքին փոփոխութիւնը կը
խնդրեն:

Չորեքշաբթի օրը մայրաքաղա-
քին մեծ շուկային մէջ Յոյն մ'և
Պարսիկ մը կ'աթուածահար ըլլալով
մեռան:

Երեքշաբթի օրը Գապարթաշի ծո-
վու բաղնիքին մէջ դժբաղդ գետն
մը պատահեցաւ:

Նաւակալար մը ծովը մանկ ու-
ղելով գլխիկայը ջուրը նետուած
ժամանակ, գլուխն ուրիշ լողացողի
մը գլխուն դարձեալ ա՛յն ստախ-
ճան ու ժգո՛ւթ ինքնապէս որ երկու քին
ալ գլուխը ջրիմուռեցաւ, և մէկն
անմիջապէս, միւսն ալ հետեւեալ օրը
մեռան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԵՍՏԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻՆԷ

19 յուլիս	Երբարթ իրիկուն	48 34
20 յուլիս	Հարաթ առաւօտ	48 36
Բացուեցաւ		
4 է օր		48 37
Կ. Պոլիս 19 յուլիս.		
Սօսիթէ մէնէրայի բաժնիք	Անգլ. լիւր.	6 28
« Գոյաւանկութեան »		4 7
Կ. Պոլսոյ Պանթային »		4 24
Գրէտի Դէնէլայ »		9 30
Գրէտի Սթիւր-Թիւրք		
Երկարութեան հին	Ֆր.	409
» նոր		83 4 2
Փոխ.	4863	» 345
»	4865	» 346
»	4869	» 266
»	4872	» 76 1/2
Թրամուէլ		5 70
ԵՆԴԱՅԻՐ ԳՐԱՄՈՅ		
19 ՅՈՒՆԻՍ		
Անգլ. Բոնա	Գաւառ.	109 25
Կ. Բոնա	»	87 24
Երբարթ Բոնա	»	89 5
Գ. Բոնա	»	51, 25
Հինգ Բոնա	»	—

Դուրս գացած իրադրաց ճան, ու
ձախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ ծանակ
կամ որ եւ ինչ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Չինիլի խան, Մարսի գրասեն-
եակը:
Համար ծախքը չվճարուած են:
Ժանկ չընդունուիր:

Հինգնոց	10 32
Պրիւսի	125

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Մայրաքաղաքս գտնուող Բայրու-
ցի ազգայինը՝ իրենց առաջնորդին ա-
զատութեան մասին մինչեւ երէկ լուր
մ'առած չըլլալով, երէկ խառն ժո-
ղովոյ ներկայացան և լուր խնդրեցին:
Խառն ժողովը չլինալով պատասխան
մը տալ, որոշեց հեռագրով տեղե-
կութիւն խնդրել Տիարաքէ. քիւրէն Մի-
անդամայն որոշեց նախակ մը գրել
Տիարաքէ. քիւրի կուսակալին և խնդրել
որ Բայրուայ հայ ժողովրդեան արժան
եղած պաշտպանութիւնը չզլանայ,
մինչեւ որ տեղւոյն Պէյերուն հետ
բացուած հողային դատն ըստ օրինի
կարգադրի:

ՊԵՏՏՈՒԱԿԱՆ ԵՄԼՈՒՑՈՒՄՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ազգ. կրօնական ժողովը իմանա-
լով որ Չիլիկիւրեան Յակոբ անուն
անձը կը լանդ-դէն մերթ ընդ մերթ
պատկի տարադրութիւն ձևացնել հա-
յոստանեաց եկեղեցւոյ զաւակաց
վրայ, ի պաշտօնէ կը յայտարարէ
ներկայիս որ կըմանա ժողովը երբե-
քան յայտարարեց, այս շաբաթ ալ ան-
ձան և ազգային կըմանա, և յետ այ-
սորիկ ամենայն միջոց ի գործ պիտի
դնէ այս օրինակ պատկանները խու-
ղարկելով հարկ եղածը անօրինակ:
Կրօնական ժողովը իւր այս որո-
շումը կը հրամայէ ընդեռնուլ յա-
տենի Եկեղեցեաց Մայրաքաղաքին
և հրատարակել յամենայն ազգային
լրագիրս:

Ի դիմաց կրօն. ժողովոյ
Ազգային վարչութեան
Ատենադպիր Ատենապետ
Խորէն Վերդա. Խորէն Արեւի-
Պ. Կիւրքանց Նոր Գեյ
18 Յուլիս 1874
Ի Պարքին Հայոց
Ի. Պոլիս

ՊԵՏՏՈՒԱԿԱՆ ԵՄԼՈՒՑՈՒՄՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Մայրաքաղաքս թաղերէն ոմանց
մէջ աշխարհական անձինք՝ երբեմն
գիտութեամբ և երբեմն չիտաւ-
թեամբ Թաղ. Խորհրդոց՝ եկեղեցա-
կան զգեստ կամ անօթ ի ձեռին ժո-
ղովրդէն դրամ հանդամակերտ ան-
պաշտած սովորութիւնն ունին, կը
րօնական ժողովը եկեղեցւոյ անպատ-
ուութիւն համարելով զայդ, կը հը-
րամայէ, որ Թաղ. Խորհրդոք եր-
բէք չներեն այդպիսի հանդամակե-
րութիւններ, և բնեւ յանդգնեցանք քէ-
ք

պարտ ու պատշաճ խառնութիւնն 'ի գործ դնեն :

Ի դիմաց կրօն, ժողովոյ Ազգ. վարչութեան Ատենադպիր Ատենապետ Խորեն Վրէժդ Խորեն Ուրեղույ Պ. Կէրպեշեան Եւ Պէյ

4) յուլիս 1874

Կրօնական ժողովոյ հրատարակած այս պաշտօնական ծանուցմանց նպատակներն արդարեւ գովութեան և շնորհակալեաց արժանի են : Սակայն թող ներէ մեզ պատկառելի ժողովը գիտել թէ վերոյիշեալ ծանուցմանց հրամայական ոճն իբրեւ միապետական իշխանութեան ոճն անպատշաճ կը թուի եկեղեցական խորհրդոյ մը բերնին մէջ : Խորհուրդ մը կամ ժողով մը որոշում կընէ, և չհրամայեր : Հըրամանը մի միայն գործադիր իշխանութեան գլխին կը պատկանի, որ Ս. Պատրիարքն է :

Ինչպէս ամեն տեղ և ամեն ազգաց՝ նոյնպէս և մեր ազգին մէջ մինչև հիմայ սովորութիւն էր, որ կրօնական և քաղաքական ժողովոյ որոշումները՝ նոյն ժողովոյ նախագահ Ս. Պատրիարքը կը գործադրէր պատշաճ քաղաքական հրամանագրով, կամ առ որ անին է հաղորդելով :

Այս սովորութեան բարձունքն անտեղութիւն կը թուի մեզ, որովհետեւ Պատրիարքական իշխանութեան կամ իրաւասութեան ոչնչացում կը նշանակէ, որ նոյն իսկ Սահմանադրութեան արամագրութեանց հակառակ է :

Ասկէջ գաւ, ներուի մեզ նաեւ գիտել թէ կրօնական ժողովոյ հրամայական իշխանութիւնը եթէ երբեք ունի՝ լրագրաց վրայ չկրնար տարածիլ : Լրագրութիւնը քահանայութիւն վարդապետութիւն կամ արհիւսագութիւն չէ որ կրօնական ժողովէն կախում մ' ունենայ, կամ անոր իշխանութեանն ու հրամանին հպատակի : Հետեւաբար, կրօնական ժողովոյ որոշումներն հրատարակելը՝ լրագրաց ազատ կամքէն կախեալ է

և ոչ կրօնական ժողովոյ հրամանին : Լրագրիւր կը յարգեն և պարտին յարգել կրօնական ժողովն իբրեւ ազգային եկեղեցւոյ և եկեղեցականաց բարեկարգութեան հսկիւն վնաս պաշտօնն ունեցող պատկառելի մարմին՝ երբոր իր պաշտօնին բարձրութեան հաւատարմութեան մէջ գըտնուի, ուստի և իր օրինաւոր որոշումներն ալ ամենայն փութով կը հրատարակեն : Բայց այս ազատ փոյթն և ազատ յարգանքը խիստ հեռի է այն ծառայական հրամանական տարութիւնէն՝ որ միմիայն Պատրիարքին կրնին բերել մէջ կրնար տեղի ունենալ ժամանակաւ :

Եւրոպայ բնակեալ Հայոց հոգեւոր հովիւ Հիւնքեարպէյեանեան Գևր. Տէր Թոհանէն հայրը, որ 1870-էն 'ի վեր Կ. Պոլսի կը գտնուի, յառաջիկայ չորեքշաբթի օրը Սայրաքաղաքէս փարիզ պիտի վերադառնայ, իւր հետ տանելով քանի մը Հայ պատանիներ, որք իւր հայրական խնամոյց և պաշտպանութեան յանձնուած են :

... խմբագիր աչք :

Կաղաքում որ ներկայ գրաւածոյ ձեր ազգայնութեան մէջ անկիւն մը չընտրեն ըստ նախնի :

Ինչպէս յայտնի է, նախորդ կիւրաքի յուլիս 14ին Նուարթ-Դաշնագրութեան Գալուստի արքեպիսկոպոսութեան հանգէսը կատարուեցաւ ի ներկայութեան Կ. Պոլսի Պատրիարք հօր, Խորիւսան արքեպիսկոպոսի և այլ բազմաթիւ եկեղեցական և երկուսեան աշխարհական հանդիսականաց, յորս կային և օտարազգիք : Խմբագրական հանգէսը ներկայացուց չէ, ոչ ալ աշակերտաց յառաջիկայ իմութիւնը : Մենք տեսնելն անձամբ մտնողներն և խնամակալութեան ջանքը փառաբերել, որովհետեւ ով որ աչք ունի տեսաւ, և ով որ զգացանքը ու սիրտ կը կրէ՝ զգաց և սիրտացաւ : Այլ իմ գիտատրութիւնս է նոյն հանդիսին մէջ տեղի ունեցած իրողութիւնները, զորս Պ. Ն. Օրագրոյ 1288 թուոյն մէջ ըստ իւր քմաց յերեւած էր ուղղել :

Զգիւմով թէ Օրագրոյ յօդուած աղիւն

ինչ մտքը գրած էր այդ հանդիսին վրայ : Եթէ ընթերցող հասարակութեան իմացներու համար էր, առ այդ չափ պատկառելի կրնային լինել իր կային յիշուած, և թշնամանք մը Խորիւսան արքեպիսկոպոսի հոգին : Օրագրոյ ամենօրեայ սովորական գործն է : Այսպիսի հանգէս մը նկարագրողին պարտքն է՝ վարժարանին բարոյական կացութեան, աշակերտաց վիճակին, յառաջիկայութեանց կամ յետագիւցութեանց, խնամակալաց և տեսչին ու զոհողութեան վրայ գրել, և ոչ թէ տեղւոյն և օգին վրայ գրել, և մի միայն խօսուած տեսնալով իրենց խրճիւղը խրճիւղ և անոնց միտքերն ու իմաստները խեղաթիւրել : Պիտի ըսէ թերեւս այդ պարտքը թէ այդքան պարագաներու ինչպիսի կարելի է մէկ քանի ժամուան մէջ վերահասու լինել : Բայց դպրոցին դուռը բաց էր, և իւր ալ պարտքն էր ներկայ գտնուիլ հարցաքննութեանց, և անձամբ տեսնալ ու քննել նոյն յարկին մէջ ուսանողներուն որոշած դաստիարակութեան մեթոդը, և ոչ թէ առանց վրան ազատ գաղափար մը ունենալու ելլել չարամտութեամբ ալ ու ձախ քաղքել :

Մի և նոյն պարտքը կար մանաւանդ Օրագրոյ Մենք, Խորագրին, սոյնինքն նա ալ պարտաւոր էր իր սոյն վիճակին լաւ խելամուտ լինել և իրաւ այն յօդուածը իւր թերթին մէջ ընդունիլ, և որովհետեւ յօդուածին ստորագրութիւնը ծածուկ և անորոշ է, ըսել է թէ խմբագիրն իբրեւ իւր անձնական գրութիւնը հրատարակած է, ուստի ինչ որ կըսենք յօդուածագրին, նոյն կը վերաբերի նաեւ Օրագրոյ Մենք, Խորագրին :

Օրագրոյ յօդուածագրին Խորագրեան Հիւնքեարքի ատենախօսութեան վրայ գրեւորները կը յիշեցնեն ինչ այս առաջին թէ՛ արագազը մարդարիտը կը ձգէ և իւր փորին պէտք եղածը միայն կ'առնուի : Ատենախօսն Հիւնքեարքն անցնալ տարի հըրամարիլ ուղեւորն և նորա պատճառին վրայ ալ խօսեցաւ, բայց այս բանը Պ. Ն. Իրանին երաժ չըլլալով՝ ոչ մի բան չէ ըսած իւր յօդուածին մէջ այս մասին : Այլ միայն ժառանգաւորաց եկեղեցական կամ աշխարհական լինելու, և ժողովրդի

եան ու կրօնականաց ասանջութեանց վրայ ըրած խօսքերը մէջ բերած է, որոց որչափ կարեւոր և հանճարեղ լինեն, հասկըցներու համար բաւական է ըսել որ Խորագրեան Հիւնքեարքն այն հոգեւոր և իւր ալ մէջ մէկ գործող մէջ արդարաւոր և առնչաւոր : — Ինչպէս ըսաւ Ս. Պատրիարքը հայրը, — մարդու մը բերնէն կ'սկսէ Պ. Ն. մեզ կը գնէ Ատենաքան Հիւնքեարքն որ գէթ խօսեցաւ այնպիսի դրութեան մը, որուն հետեւողներ կային հանդիսին ներս կայ, բայց չի մասնակցել թէ՛ այս բանը տեսնել կը փառաւորէ նորա անունը, և կը բարձրացնէ նորա համբաւը :

Մենք իրաւունք ունիք ատենախօս Հիւնքեարքի ամենէն աւելի գիտութիւնը յառաջ քշելու, փասն զի հրապարակը լի է Օրագրոյ յօդուածագրին պէս տղէտ իմաստականութիւնով, որ փոփոխութիւն չընդունի ըստ ծմբային լոյս կանուանէ, որուն գաղափարը գոյցէ իւր ուղեղին մէջ ըլլալ միայն, փասն զի բնութեան մէջ այդպիսի բան մը տեսնուած չէ, ոչ ալ մարդոց փորձերէն ձեռք բերուած :

Կուսութեան Հիւնքեարքի ատենախօսութեան վրայ յօդուածագրին գրածներն ևս ոչ սակաւ քմայական էին, որով յայտնի կը տեսնուի թէ իւր նպատակն աւելի Խորիւսան արքեպիսկոպոսի, Կուսութեան և Խիւսիսեան Հիւնքեարքերը և ուրիշ քանի մը պատուաւոր անձինք նախատեղ և տնտեսական կ'էր քանի Հանգէսը նկարագրել : Կը մեզազդէ զԿուսութեան Հիւնքեարքի դպրոցին նաեւ առ Խորիւսան սըրբազանն երախտագրութիւնը հրապարակու խօստովանելուն համար, և կը հարցնէ թէ ինչ են այդ երախտագրութիւնը, զարմանալի բան : Ինչպէս կարելի է որ մէկ օրագրաց ատենախօսութիւնը մը և ինքզինքը անոր պարտաւոր խօստովանի : Մեր պարտքը կը դանդաղեցնեն Կուսութեան Հիւնքեարքն, որ իրեն ունեցողութեան յարմար տեղ մը տալու գանցաւ ուսութեան մէջ է գտնուել : Կըստի, այն տեղ թաւարին չէր, որ նախորդները ըստ սովորի և տոմարական լինելին, դուր արդէն կը վախճաւ ինքզինքնիւ ցուցնելու, և անկիւններու խորքերը կը ծածկուէր որ մարդ զմեզ չտեսնայ, եթէ կուզէր այսպիսի դժբաղդութեանց մէջ չլինալ և հրապարակային հանգիսներու մէջ ունեւ

ՀԱՏՈՒԱԾՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԲԱՆԱԼԻ ԹԱՐԱԲԱՅՈՒ ՊԱՏՄԱՐԱՅՈՒ

(Գոր. Գ. Բ. 1356)

ԽՊԵ ԽՊԱՍՏՈՒՆ ՀԱՏ. Ե. ԵՐ. 63

ԽՊԵ ԽՊԱՍՏՈՒՆ ՀԱՏ. Գ. ԵՐ. 89

Հիւնքեարք 112 (Փրկչ. 730—731) թուին Արմայ երկրին խաղաղութիւնն ու թուրքերը միանալով իւրամաց երկրներն արշաւեցին : Ճէրաճ՝ Սիրիոյ զօրքերով անոնց դէմ ելաւ և արիւնոսեւ ճակատամարտ մը տուաւ : Երկու կողմն ալ դիմացան, բայց որովհետեւ թուրքերն ու խաղաղներն իսկաւ ներքէն աւելի բազմաթիւ էին, Ճէրաճ և իր զօրքերը նահատակ ըլլալ ու զեցին Սրտավանի դաշտին մէջ : Ճէրաճ իր Մեծաճ եղբայրն Հայաստանի ստաիկան անուանած էր իր տեղը : Երբոր Ճէրաճ պատերազմին մէջ մեռաւ, խաղաղներն իսկաւ երկրին արշաւեցին մինչև Մուսուլ, և գործն տւելի մեծցաւ :

Ճէրաճ պատուական մարդ մ'էր, և Խոմէր աւարտեալին ընտիր պաշտօնատարներէն մին : Բանաստեղծներն երգէր յօրինեցին անոր վրայ :

Երբոր Հիւնքեարք ամիրապետն անոր մեռնիլը լըսեց, Սայիտ Էլ Հարեշին քովը կանչելով ըսաւ. «Իմացոյ որ Ճէրաճ եւ քաջուր է անհաւատից առջեւէն» Սայիտ պատասխանեց. «Այո՛, հրամատարգ հաւատացելոյց՝ այդպէս է : Ճէրաճ 'ի փախուստ քաղեց և սպանուեց է : — Արդ ինչ կը խորհիս այդ մասին, հարցուց ամիրապետը : — Զիս քառուսուն հոտ ուր հանդակի ձկնիւմ ճանաչայ հանէ պատասխանեց Սայիտ, և ամեն օր քառասուն մարդ զրկէ ինձ : յետոյ հրաման քրէ զօրաց լիցոյ որ գան ինձ հետ միանան : — Հիւնքեարքն այս առաջարկութիւնը, և Սայիտ ճանաչեալ ելաւ : Ան

ցած ամեն քաղաքաց մէջ բնակիչներն յորդորեց որ կոմաւոր զօրականներ տան իրեն, մինչև որ Արծն (Հին Տիգրանակերտ) քաղաքը հասաւ, ուր Ճէրաճի բանակին մնացորդները գտաւ, որք իրենց զօրագլխին (Ճէրաճի) մահը կողբային : Սայիտ ստակ բաշխեց անոնց և յորդորեց որ իր զօրաբանակին հետ միանան : Խիւսիսի առջև հասած ժամանակ, բնակիչները քաղաքին դուռը փակեցին իր առջև : Պաշարեց քաղաքը, և յորձակմամբ աւելով աւարն իր զօրաց բաշխեց : Յետոյ մի առ մի նուաճեց բոլոր քաղաքներն ու տաւրները մինչև 'ի Պէրտաւ, և հոն իր բանակին կեդրոնը հաստատեց : Այն միջոցին խաղաղաց խաղաղներն որքին Արարատական մանելով՝ ամեն կերպ շարիք ու աւելանալով գործելէ ետեւ՝ վարդապետ քաղաքը պաշարէր էր : Սայիտ վախեալով որ քաղաքն անձնատուր կըլլայ, գաղտնի պատգամաւոր մի գրիկեց 'ի վարդապետ իւր գաղափարներն իր խնայելու և պատուիրելու որ գիմանան : Պատգամաւորը բնականաւ խաղաղներէն, որք տեղեկութիւն հարցուցին անոր : Նա ալ իրաց ստացուած կը ծանուցէր անոնց : Այն ժամանակ ըսին իրեն. «Եթէ մեզ օգուտ է հրամանն իսկ կատարել, մեծ վարձատրութիւն կըլլայ քեզ : — Ինչ է ձեր կամքը : — Ըսէ վարդապետը բնակչաց թէ ազատութեան հնարք չկայ իրենց, և յորդորէ որ երկիրը մեզ յանձնեն : Պատգամաւորը խօսք տուաւ ըսածնին ընելու, և քաղաքին մօտենալով՝ գաղտնի բնակչաց. «Եր ճանչէ՞ք զիս : — Այո՛, կը ճանչենք : — Այս անուն մարդն ես : — Որքն կ'իմացնեմ ձեզ թէ Սայիտ Էլ Հարեշի մեծ բանակաւ մ'այս ինչ տեղ հասած է, և կը հրամայէ ձեզ որ գիմանաք և քաղաքը պաշտպանէք : Փասն զի քանի մ'օրէն հոս պիտի հասնի : — Հաղիւ այս խօսքը լմացուց, խաղաղները զարկին սպաննեցին զայն, և իրենք վարդապետն առնելէն հաւայանալ ճառ շնորհակալ : — Սայիտ ալ հասաւ, և խաղաղներն հոն չգտնելով, Արարատն գնաց գտնելու : Բայց քաղաքը անկից ալ հեռացաւ : Սայիտ Պաճրէզման գնաց նստաւ : Հոն սպիտակ ձիով հեծեալ մ'եկաւ և խրեցաւ :

յոյ թիւն յայտնեց Սայիտի՝ ըրած յաղթութեանը և կողոպուտին համար : — Ինչ յաղթութիւն և կողոպուտ է այդ ըսածդ : Եւ դեռ բան մը տեսած չեմ, պատասխանեց Սայիտ : — Խաղաղաց զօրքերը 10000 հոգի են, ըսաւ հեծեալը, հետեւներն 5000 իսլամ գերի ունին, և հիմա չորս փարսիս հեռի են աստի՛ : Սայիտ գիշերանց ճանաչեց ելաւ, և հետեւեալ գիշերը թշնամեաց վրայ հասաւ, որք ամենն ալ քնացած էին : Սայիտ իր զօրքերը չորս գունդ բաժնելով թշնամիները պաշարեց և արշաւաւ միջոցներն իսլամը այնպէս ուժգին յորձակեցան անոնց վրայ, որ արեւ դեռ չծագած բոլոր խաղաղները ջարդեցին, բայց 'ի մէկէ մը Սայիտ՝ բոլոր իսլամ գերիներն ազատեց և Պաճրէզման գաղափար իրեն հետ : Քաղաքը մըտած ժամանակ նոյն սպիտակաձի մարդն (իսկ խաղաղներն անոր լըտեւ մը կըսէ) եկաւ զինքը գըտաւ և խնայուց թէ այս ինչ տեղը խաղաղաց ուրիշ բանակ մը կար բազում աւարտ և գերիներով, որոց մէջ էին նաեւ Ճէրաճի ընտանիքն ու որդիքը : Սայիտ իսկոյն ճանաչեց ելաւ, և յանկարծ խաղաղաց վրայ հասնելով՝ այնպիսի ջարդ մը տըւաւ, որ հաղիւ քանի մը մարդ կըցան պրծել : Սայիտ բոլոր իսլամ և իսլամահի գերիներն ազատեց և անբաւ կողոպուտ առաւ : Իսկ Ճէրաճի ընտանիքն ու որդիքը Պաճրէզման տանելով խրեւորեց :

Երբոր խաղաղաց թաղաւորն սրբին այս անցքին իմացաւ, իր 'զօրացը բարկանալով վատութիւններն կշտամբեց : Զօրքերն ալ եղեւթութիւնը նկարագրեցին, և զիրար քաջալերելով պատերազմը նորոգել խոստացան : Ուստի նորէն գումարուելով Արարատական արշաւեցին : Սայիտ անոնց դէմ երթալով, Պէրզէմա ըստած տեղը կուրի բաւեցաւ անոնց հետ : Խաղաղները տկարանալ

* Խորն Էլ Աթի յայտնեց պատմելով հրաջի կերպարանք տալ կուզէ գործին : Բայց իսկ խաղաղաց պարագայէն կըսէ թէ այս տեղեկութիւնը բերողները բոլորն են իրն :

